ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Ուսանողական գիտական ընկերություն

Լեռնահայաստանի հռչակման 100-ամյակին նվիրված հանրապետական ուսանողական գիտաժողովի

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

2021թ. մայիսի 6-7-ը Գորիսի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպում է հանրապետական գիտաժողով՝ նվիրված Լեռնահայաստանի հռչակման 100-ամյակին:

Զեկուցումների թեմատիկան ազատ է:

Գիտաժողովն անցկացվելու է հետևյալ ուղղություններով.

- Պատմություն
- Գրականագիտություն
- Լեզվաբանություն
- Մանկավարժություն
- Հոգեբանություն
- Փիլիսոփայություն
- Ազգագրություն
- Իրավագիտություն
- Կենսաբանություն
- Քիմիա
- Ֆիզիկա
- Աշխարհագրություն
- Մաթեմատիկա
- Կիրառական մաթեմատիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ
- Տնտեսագիտություն
- Ճարտարագիտություն
- Տուրիզմի կառավարում

Գիտաժողովը նախատեսում է առկա և հեռավար/հեռակա մասնակցության ձևեր: Գիտաժողովին կարող են մասնակցել բակալավրիատի ու մագիստրատուրայի ուսանողները:

Դիմելու համար անհրաժեշտ է մինչև **2021 թվականի ապրիլի 5-ը** ներկայացնել դիմում-հայտը, իսկ զեկուցումը և գիտական ղեկավարի կարծիք-երաշխավորագրի սքանավորած տարբերակը՝ **մինչև ապրիլի 25-ը**՝ հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ sssgorsu@gmail.com:

Գիտաժողովի աշխատանքային լեզուներն են հայերենը, ռուսերենը, անգլերենը:

Այն զեկուցումները, որոնք գիտաժողովի կազմկոմիտեի կողմից կարժանանան երաշխավորության, կտպագրվեն առանձին ժողովածուով:

Գիտաժողովի անցկացման վայրն է՝ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Ավանգարդ 2, Գորիսի պետական համալսարան:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել Գորիսի պետական համալսարանի ՈՒԳԸ նախագահ Հարութ Դավթյանին (հեռ.՝ 094 -63-89-33):

Կից ներկայացվում են գիտաժողովի մասնակցության հայտը, երաշխավորագրի ձևաչափը և հոդվածների ներկայացման կարգը:

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հանրապետական ուսանողական գիտաժողով՝

նվիրված Լեռնահայաստանի հռչակման 100-ամյակին

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

Անուն, Ազգանուն (հայերեն, ռուսերեն, անգլերեն)	
Բուհ (ամբողջական անվանումը)	
Ֆակուլտետ	
Ամբիոն	
Կարգավիճակ (բակալավրիատի ուսանող, մագիստրանտ)	
Կուրս (կրթական ծրագրով ուսուցման տարի)	
Բաժանմունքի անվանումը, որտեղ ցանկանում եք ներկայացնել զեկուցումը	
Հոդվածի գիտական ղեկավարի անուն, ազգանուն, գիտական աստիճան, կոչում	
Զեկուցման (հոդվածի) ամբողջական վերնագիրը (հայերեն, ռուսերեն, անգլերեն)	
Էլեկտրոնային փոստի հասցե	
Հեռախոսահամար	
Մասնակցության ձևը (առկա, հեռակա/հեռավար)	

Հայտերի ընդունման վերջնաժամկետը 2021թ. ապրիլի 5-ն է:

ԳՊՀ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ ՀԱՐՈՒԹ ԴԱՎԹՅԱՆԻՆ

ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐ

Հարգելի՛ Հ.Դավթյան,

Ձեզ ենք ներկայացնում մեր ամբիոնի կողմից «ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու»-ում տպագրության երաշխավորված հետևյալ հոդվածը.

Հեղինակի անունը և ազգանունը	
Հոդվածի վերնագիրը	
Հրատարակության ներկայացնող ամբիոնը (ֆակուլտետ, ամբիոն)	
Գիտ. ղեկավարի անունը և ազգանունը , գիտական աստիճանը, կոչումը	
Հոդվածի վերաբերյալ համառոտ կարծիք (գիտական նորույթ, արդիականություն և այլն)	

Ամբիոնի վարիչ՝ _____ /_____/

ստորագրությունը անվան առաջին տառը և ազգանունը

Գիտական ղեկավար՝ _____ /_____/

ստորագրությունը անվան առաջին տառը և ազգանունը

__. __. 2021 թ.

ԳՊՀ ՈՒԳԸ հանրապետական ուսանողական գիտաժողովին ներկայացված գիտական հոդվածների տպագրության համար անհրաժեշտ տեխնիկական պահանջները

Հոդվածները կարող են ներկայացվել հայերեն, ռուսերեն, անգլերեն՝ ունենալով երեք լեզուներով համառոտագրեր (50-60 բառ) և բանալի բառեր (մինչև 10 բառ): Էջի ֆորմատը՝ A4, տեքստի տառատեսակը՝ Sylfaen (հայերենի համար), Times New Roman (անգլերենի և ռուսերենի համար), տեքստի տառաչափը՝ 10, միջտողային հեռավորությունը՝ 1.05, լուսանցքները՝ վերևից՝ 6 սմ, ներքևից՝ 6.5 սմ, ձախից՝ 4 սմ, աջից՝ 5,5 սմ, պարբերության սկիզբը՝ 0.75 սմ: Տեքստում չպետք է լինեն կրկնակի բացատներ և տողադարձեր:

Հոդվածի սկզբում դրվում է վերնագիրը (գլխատառերով և թավ, 11 տառաչափով), հաջորդ տողում նշվում են հեղինակ(ներ)ի անուն-ազգանունը (թավ, 10 տառաչափով), ուսումնական հաստատությունը, մեկ տող ներքև՝ գիտական ղեկավարի անուն-ազգանունը, գիտական աստիճանը (10 տառաչափով): Հաջորդ տողում դրվում են հոդվածի լեզվով համառոտագիրն ու բանալի բառերը, իսկ հիմնական տեքստի վերջում՝ գրականությունից հետո, հոդվածի տեքստի հետ չհամընկնող երկու այլ լեզուներով կրկնվում են հոդվածի գլխամասը (հոդվածի վերնագիր, անուն-ազգանուն, ուսումնական հաստատություն, ուսուցման տարի, գիտական ղեկավարի անուն-ազգանուն, գիտական աստիճան) և համառոտագիրը:

Հղումները (ներտեքստային կամ տողատակային) տրվում են նույն էջում:

Նկարները և աղյուսակները տեղադրվում են տեքստում այդ մասին նշում կատարելուց հետո՝ նույն կամ հաջորդ էջում, և ունեն միջանցիկ համարակալում: Նկարի գրաֆիկական դաշտը հնարավորին չափ անհրաժեշտ է բեռնաթափել ավելորդ նշանակումներից և բացատրություններից, որոնք տեղփոխվում են նկարատակ արտահայտություն (9 տառաչափով): Կոորդինատային առանցքների վրա պարտադիր է հԼ համակարգով ընդունված մեծությունների չափողականությունների ներկայացումը (բացի տեսական կորեր կամ հարաբերական մեծություններ պարունակող գրաֆիկական նյութերից):

Աղյուսակները պետք է ունենան վերնագրային բացատրություններ և համարակալում, որոնք տրվում են 9 տառաչափով, իսկ աղյուսակի գլխամասի սյունակները՝ մեծությունների չափողականություններով: Աղյուսակի մի հատվածը հաջորդ էջ տեղափոխելու դեպքում պարտադիր է սյունակների համալրումը, որը կրկնվում է տեղափոխված աղյուսակի հատվածի գլխամասում:

Բանաձևերը և մաթեմատիկական արտահայտությունները տրվում են Microsoft Equation, *Italic*, 10 տառաչափով: Բանաձևերը ներկայացվում են առանձին տողով և մեջտեղում, իսկ հիմնականները նաև համարակալվում են նույն տողի աջ անկյունում՝ փակագծերի մեջ:

Հոդվածի ավարտից երկու տող ներքև՝ մեջտեղում, նշվում է «Գրականություն» բառը (թավ, 11 տառաչափով) և, ըստ ընդունված ստանդարտի, 10 տառաչափով տրվում է գրականության ցանկը: